ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-40-Ո-106
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՐՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2018 թվականի սեպտեմբերի 27-ին, քննարկելով դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ հարցումների իրականացման կարգը, հարցման շրջանակում ընդգրկված մարմինների ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը սահմանելու մասին հարցերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 99-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Սահմանել դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ հարցումների իրականացման կարգը և հարցման շրջանակում ընդգրկված մարմինների ցանկը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 27
ք. Երևան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի
2018թ. սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-106
որոշման

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ԵՎ ՀԱՐՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացված հավակնորդների ցուցակի հրապարակման օրվան հաջորդող մեկ շաբաթվա ընթացքում «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված համաձայնության հիման վրա, հավակնորդին ներկայացվող պահանջների համապատասխանության ստուգման սահմաններում, Դատական դեպարտամենտը, անհրաժեշտության դեպքում, գրավոր հարցումներ է կատարում հետևյալ հաստատություններ և վարչական մարմիններ.

1) հավակնորդի աշխատավայր՝ պահանջվող մասնագիտական աշխատանքի փորձառությունը հավաստող տեղեկատվության ստուգման նպատակով,

2) հավակնորդի բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ իրավաբանական կրթության՝ պահանջվող որակավորման աստիճանի առկայությունը հավաստող փաստաթղթի ստուգման նպատակով,

3) ՀՀ արդարադատության նախարարություն՝ հավակնորդի սնանկության կամ դրա բացակայության մասին հայտարարությունը հավաստող փաստաթղթի ստուգման նպատակով,

4) ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն՝ հավակնորդի դատվածության կամ դրա բացակայության մասին հայտարարությունը հավաստող փաստաթղթի ստուգման, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տեղեկատվության ստացման նպատակով,

5) բժշկական հաստատություն՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին Կառավարության սահմանած կարգով տրված փաստաթղթի ստուգման նպատակով,

6) զինվորական մարմին՝ արական սեռի հավակնորդի դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու փաստը հավաստող փաստաթղթի ստուգման նպատակով,

7) Բարձրագույն որակավորման կոմիտե՝ գիտական աստիճանի առկայությունը հավաստող փաստաթղթի ստուգման նպատակով:

2. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասով Դատական դեպարտամենտին վերապահված լիազորություններն իրականացնելու նպատակով, սույն որոշմամբ սահմանված իրավասու հաստատությունները և վարչական մարմինները համապատասխան հարցումն ստանալու պահից մեկ շաբաթվա ընթացքում Դատական դեպարտամենտին են տրամադրում հայցվող տեղեկատվությունը:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի
2018թ. սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-106
որոշման

ՀԱՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՁԵՎ

Հավակնորդի ազգանուն, անուն, հայրանուն		
Հարցման բովանդակություն		Հարցման հասցեատիրոջ նկատառումներ
1.		
2.		
3.		
4.		